Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 38

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Գ. Սուքիասյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը, բաժինների պետեր:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը, ելույթ ունեցավ Աշտարակ համայնքի ավագանու անդամ Մերի Մաթևոսյանը: Նա ներկայացրեց <<Միավորող կամուրջ>> սոցիալական ՀԿ-ի ու ավագանու անդամների կողմից իրականացված հարցումների արդյունքում ստացված առաջարկությունների մասին:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 163-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Կրթահամալիրներ կառուցելու վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

7. Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրում փողոցի և թաղամասի համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

9. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 163-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>

օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով,

1.Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 163-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և Աշտարակ համայնքի 2024թ.-ի տարեկան բյուջեի 1-6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

/հազ. դրամ/

	Վարչական բյուջե	*Ֆոնդային բյուջե*	*Ընդամենը*
Եկամտային մաս	4299212.4	1850000.0	6149212.4
Ծախսային մաս	4311616.1	2320720.4	6632336.5
Դեֆիցիտ	- 12403.7	- 470720.4	- 483124.1
Պահուստային ֆոնդ	700000.0	0	700000.0

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը /ՄԺԾԾ/՝ համաձայն հավելվածների:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով.

1.Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման Հավելված 2-ի մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝

- <<Աշխատակիցների թվաքանակը՝ 240>>-ը փոխարինել <<Աշխատակիցների թվաքանակը՝ 241>> բառերով,

2-րդ մասի 5-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

Իրավաբանական բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	1	200000	200000
4	Գլխավոր մասնագետ /ՔԿԱԳ/	1	166000	166000
5	Առաջատար մասնագետ	3	180000	540000
6	Առաջատար մասնագետ /ՔԿԱԳ/	1	156000	156000
Ընդամենը		**8**		**1 762 000**

2-րդ մասի 8-րդ պարբերության

3	Գլխավոր մասնագետ	8	200000	1600000
4	Առաջատար մասնագետ	6	180000	1080000
Ընդամենը		**16**		**3 380 000**

տողերը փոխարինել հետևյալ տողերով՝

3	Գլխավոր մասնագետ	6	200000	1200000
4	Առաջատար մասնագետ	8	180000	1440000
Ընդամենը		**16**		**3 340 000**

2-րդ մասի վերջին

ԸՆԴԱՄԵՆԸ	**100**		

տողը փոխարինել հետևյալ տողով՝

ԸՆԴԱՄԵՆԸ	**101**		

4-րդ մասի

ԸՆԴԱՄԵՆԸ	**239,5**		**55 359 000**

տողը փոխարինել հետևյալ տողով՝

ԸՆԴԱՄԵՆԸ	**240,5**		**55 619 000**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Կրթահամալիրներ կառուցելու վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Սարգիս Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Նոր Ամանոս և Սասունիկ /Կարին/ բնակավայրերի վարչական տարածքներում իրականացված կրթահամալիրների կառուցման աշխատանքների վերաբերյալ հանրային լսումների արդյունքները, ղեկավարվելով <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման պահանջներով, նախնական համաձայնություն տալ՝ Աշտարակ համայնքի Նոր Ամանոս և Սասունիկ /Կարին/ բնակավայրերի վարչական տարածքում 144 աշակերտի համար կրթահամալիրների կառուցման աշխատանքներին:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Կարեն Կարապետյանի 10.04.2024թ. N 4100, Աննա Մնացականյանի 10.04.2024թ. N 4080, <<ԱՌԼԵԱՄԴՈՒՌ>> ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Խաչատրյանի 26.04.2024թ. N 4711 և Սուսաննա Մխոյանի 02.05.2024թ. N 4871 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոց, N 69/20 հասցեում գտնվող, 02-001-0843-0310 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 12քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0843-0239 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Կարեն Սերգեի Կարապետյանին:

2. Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-058-0318-0199 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,210505հա գյուղատնտեսական նշանակության հողամասը /0,132375հա-վարելահող և 0,07813հա-այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամով օտարել կից՝ ընդլայնվող 02-058-0318-0053, 02-058-0318-0193 և 02-058-0195 ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի սեփականատեր <<ԱՌԼԵԱՄԴՈՒՈ>> ՍՊԸ - ին:

3. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0670-0020 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,25586հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 10-ապատիկի չափով/ օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0670-0002 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Աննա Ռուբենի Մնացականյանին:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մ. Թամազյան փողոց, N 61/3 հասցեում գտնվող, 02-001-0229-0080 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 162,4քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0229-0081 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի բաժնային սեփականատերեր Սուսաննա Սերգեի Մխոյանին և Մարիամ Գուրգենի Ղազախեցյանին:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 7</u> - Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրում փողոցի և թաղամասի համարակալման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրում նոր փողոցին տալ 6 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Արտաշավան բնակավայր, Նիգատուն, 6-րդ փողոց:

2. Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրում նոր թաղամասին տալ 55 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Արտաշավան բնակավայր, 55-րդ թաղամաս:

3.Արտաշավան բնակավայրի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արփինե Զարգարյանի լիազորված անձ Համլետ Զարգարյանի 19.04.2024թ. N 4487 դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի ա) ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, թույլատրել Աշտարակ քաղաքի Արտակի փողոց, N 1/13 հասցեում գտնվող, 02-001-0265-0098 ծածկագրով 13,97քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Արփինե Ալբերտի Զարգարյանին տրամադրելու մինչև 30.11.2037թ.՝ տարեկան 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ վճարով:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արման Մանուկյանի 11.04.2024թ. N 4108, Արման

Զոհրաբյանի 19.04.2024թ. N 4491 և Խաչատուր Հարոյանի 02.05.2024թ. N 4877՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի 02-068-0415-0007 ծածկագրով, Արման Ավետիսի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0,669հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղ. արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0231-0041 ծածկագրով, Արման Գրիգորի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող 0,04535հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /չորանոցի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0692-0028 ծածկագրով, Խաչատուր Մերուժանի Հարոյանին սեփականության իրավունքով պատկանող 0,25հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղ. արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը և ժամը սահմանել 2024 թվականի հունիսի 11-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2024 թվականի մայիսի 15-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ